



«26» 05 2009 թ.

N 1350

Աա/ 0602

ՓՈՒՆԸՄԲՈՆՄԱՆ ՀՈՒՇԱԳԻՐ

ԻՐԱՆԻ ԻՍԼԱՄԱԿԱՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԵՎՄՏՅԱՆ ԱՏՐՊԱՏԱԿԱՆԻ
ՆԱՀԱՆԳԻ ՖԻԶԻԿԱԿԱՆ ԿՈՒՆՏՐԱՅԻ ԳԼԽԱՎՈՐ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ
ԵՎ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻ ՄԻՋԵՎ
ՄՊՈՐՏԻ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Սույն համաձայնագիրը կազմվել է հարևան և բարեկամ երկու երկրների՝ Իրանի Իսլամական Հանրապետության Արևմտյան Ատրպատականի նահանգի ֆիզիկական կուլտուրայի գլխավոր վարչության և Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանի միջև՝ սպորտային և մշակութային փոխհարաբերությունների տարածման ու ամրապնդման ուղղությամբ, որը 2009 թվականի մայիսի 26-յն ստորագրվեց Արմավիր քաղաքում:

ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌՆԵՐԸ

1. Կողմերը սպորտային հետևյալ՝ եվրոպական ազատ ըմբշամարտի, ձյուդոյի, բոնցրամարտի, ձեռքի գնդակի, շախմատի, վոլեյբոլի, թեքվանդոյի, կարատեի, սեդանի թենիսի, մարմնամարզության, սուսերամարտի, հրաձգության և սպորտի այլ ձևերում, համաձայնվեցին թիմերի փոխանակման վերաբերյալ:
2. Կողմերը, բացի վերոհիշյալ մարզաձևերից, մրցումների կազմակերպման բնագավառում և սպորտային այլ ձևերում՝ ընկերական հանդիպումներում նախնական հրավերով, կհամագործակցեն:

3. Կողմերը կհամագործակցեն երկու երկրներում միասնական հավաքներ կազմակերպելու վերաբերյալ:
4. Կողմերը կհամագործակցեն փոխադարձաբար մասնակցելու երկու տարածաշրջաններում տարբեր առիթներով կազմակերպվող սպորտային փառատոններին և մրցումներին:
5. Կողմերը կհամագործակցեն մրցավարների և մարզիկների ուսուցման և այլ հարցերի կազմակերպման բնագավառներում:
6. Կողմերը կհամագործակցեն մարզիկների և մասնագետների փոխանակման բնագավառներում:
7. Կողմերը պարտավորվում են հյուրընկալ երկրում մուտք գործելու պահից մինչև դուրս գալը՝ թիմերի սննդի ամբողջ ծախսերը՝ կացարանը և մեկնումն ու վերադարձը, ապահովել:
8. Կողմերը պարտավորվում են հրավիրյալ թիմին, սահման մուտք գործելուց և ճամփորդության ավարտից հետո, մինչև նպատակային սահման ուղեկցել:
9. Կողմերի մրցույթներում մարզական թիմերի ներկայությունը հնարավոր կլինի նախնական հրավերի հիման վրա:
10. Ուղարկվող հրավերում պետք է նշվի /հայտարարվի/ մրցումներին մասնակցելու պայմանները:
11. Որոշում կայացվեց կողմերի մարզական թիմերի և հանձնաժողովների մեկնման ու վերադարձի դյուրացման նպատակով անվճար անցագրերի առաքման խնդիրը սեփական պետությունների իրավասու պատասխանատուներից խնդրել և հանձնառու լինել փոխադարձը կատարելու պայմանով:
12. Փոխըմբռնման այս հուշագիրը կազմվել է երկու օրինակից՝ հայերեն և պարսկերեն լեզուներով: Երկու տեքստերն էլ հավասարազոր են:

Իրանի Իսլամական Հանրապետության
Արևմտյան Ատրպատականի նահանգի
Ֆիզիկական կուլտուրայի գլխավոր
վարչության կողմից



Ալի մոլլա Ահմադի

(Handwritten signature)

Հայաստանի Հանրապետության Արմավիրի
մարզպետարանի կողմից
ՀՀ Արմավիրի մարզպետ



Աշոտ Մարգարի Ղահրամանյան

(Handwritten signature)